

ՅՐԱՆՍԵՐՆԵՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՆՈՒՄՆԱՆՈՐԻՄ
ԲԱԳԱՐՎՈՒԹՅԱՆ ԴՐՄԵԼՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ *

Լ.Վ. Խաչատրյան

Գաղտնիք չէ, որ բառակազմությունը լինելով մտածողական եւ խոսքային գործունեության արդյունք, մեծապես հարստորում է լեզվական կապերի ամրապնդմանն ու մինչբառապաշարային փոխգործունեությանը: Այս ամենով պայմանավորված՝ լեզվի բառակազմական միջոցներով նոր միավորների կերտումը դառնում է բառային կազմը համալրող հիմնական աղբյուրը: Ընթանալիքը հարստացնող ուրույն միջոցներից է խոսքոված (կոնտամինացիոն) բառակազմությունը՝ բաղադրությունը (contamination):

Contamination բառագիրքին նշանակում է միախառնում, որի արդյունքում տեղի է ունենում միավորների «փոխմանակում»: Լեզվաբանական գրականության մեջ այս երևույթն ամենահազվադեպ ուսումնասիրվածներից է, այն ոչ միշտ է դիտարկվում իբրև բառակազմական ինքնուրույն միջոց եւ ունի տարբեր ձևակերպումներ:

Հայ լեզվաբանության մեջ բաղադրությունը ձևակերպվում է որպես «նոր բառի, բառակապակցության, անվան ստեղծումն ու կազմումը երկու համանուն կամ համահունչ, նաև իմաստով մոտ բառերի կամ բառակապակցության որևէ բաղադրիչի խաչավորմամբ, միախառնումով, համակցումով» [3, էջ 91]:

Ֆրանսիացի հայտնի լեզվաբան Պ. Գիրոն, անդադառաժալով բաղադրության իմաստաբանական զարգացմանն ու գործառնությանն նշանակությանը, գրում է.

«Կառույցի կրկնակի պատճառաբանվածություններն ու խաչաձևումները հաճախ առաջ են բերում իմաստային կամ գործածական արժեքների փոփոխություններ» [10, էջ 80]: Հետաքրքիր է, որ ի տարբերություն այլ օտարերկրյա հմնագրողների հեղինակը գտնում է, որ բառերի խաչավորման գործընթացը՝ բաղադրությունը, բառերի ձևավորման առանձնահատուկ միջոց է, քանզի խաչաձևումն իրականանում է ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային պլաններում: Այս տեսակետով է պայմանավորված խառնակազմ միավորները կրկնակի պատճառաբանված համարելու դրույթը:

Ֆրանսիացի նշանավոր այլ լեզվաբաններ իրավագիտուն բաղադրությունը ձևակերպում են որպես «... բառերի, բառային կառույցների, հնչյունական միավորների համաբանական փոխազդեցություն» [9, էջ 115]: Բաղադրության խառնակազմ կառույցները հաճախ կրում են հատկապես արտաքին համաբանության ազդեցությունը: (Այսինքն, ինչպես գերմանացի լեզվաբան Գ. Պաուլս է նշում. «... բաղադրության դեպքում երկու հոմանշային կամ միմյանց մոտ արտահայտչաձևեր գիտակցության մեջ մարդու ձևով հանդես չեն գալիս, ինչի արդյունքում առաջանում է նոր միավոր, որում նախորդ միավորի կառուցվածքային բաղադրիչները միախառնվում են մյուսի բաղադրիչներին» [7, էջ 191]:

Ա. Պիշկովսկին բաղադրությունը ձևակերպում է որպես «մեկ խառնածին միավորի մեջ լեզվական երկու բաղադրիչների ձուլում» [8, էջ 52]: Ըստ Օ. Ս. Ախմանովայի՝ հարադրույթային կամ շարակարգային հարաբերությունների էլիման վրա, ինչը հանգեցնում է որանց իմաստային կամ ձևական փոփոխմանը, կամ էլ՝ երրորդ միավորի կազմավորմանը» [5, էջ 206]:

Չնայած ձևակերպումների տարբեր հայեցակետերին դժվար չէ վեր հանել բաղադրությունը բնութագրող լեզվական բաղադրիչների խաչավորումն ու ձուլումը շեշտադրող բնիկանուր դիրքորոշումը:

Քանի որ մեր հետազոտությունները կատարել ենք տեղեկատվական տեքստիկների ոլորտում և գերծ ենք մնացել շարակարգային հարաբերություններում տեքստիկների

* Աստղանիշով նշված բոլոր աշխատանքները գեղագիտ. եւ «Երիտասարդ գիտնականների II գիտատրոյման»: Մոնիթորակներու, ապրիլ, 2007թ.:

կապակցման փոխարարքերությունների դիտարկումներից, բաղադրությունը կօնակերպեր որպես լեզվական երկու բաղադրիչների խաչավորում՝ իրենց կառուցվածքային նմանության, գործառնության կամ իմաստային զուգահեռության հիման վրա:

Բաղադրության միջոցով առաջացած այն տերմինները, որոնց մեջ առկա են փոխազդող միավորների ընդհանուր գծերը, կոչվում են բաղադրված կամ խառնակազմ տերմիններ, ձևեր [4, էջ 47], ինչպես նաև փուլայիններ (mots-valises, բառացիորեն բառ-ձևավորվածներ) [2, էջ 332]: Վերջինի ձևակերպման ֆրանսերեն տարբերակը բավական ուշագրավ է այն առումով, որ արտացոլում է և բաղադրության բառակազմական խոտզվածությունը, և ոճական-երգիծական բնույթ:

Անկասկած, բաղադրությունը լեզվում հուզական-ոճական բառապաշարի համալրման միջոց է, որը հաճախ գործածվում է խոսակցական լեզվում՝ հումորիկ երանգ հաղորդելու համար: Լեզվաբանական այս երևույթը հաճախ դիտվում է որպես գրական նորմալի շեղում: Բաղադրության միջոցով ստեղծվող միավորները հազվադեպ են նորմատիվ համարվում, հիմնականում անհատական, կամայական բնույթ ունեն: Հետաքրքիր է, որ լեզվական նորմային համապատասխան ճիշտ կազմություններին եւ անհատական ստեղծություններին անդրադառնալով՝ Վ. Իգլովիչը գտնում է. «...ճիշտ խոսելն այն է, ինչպես ես եմ խոսում կամ ինչպես ես եմ գտնում անհրաժեշտ» [6, էջ 3]:

Այսինքն՝ այս դեպքում նորմավորված գործածումը որպես համընդհանուր եւ ինքնին գոյություն ունեցող օբյեկտիվ իրողություն չի համարվում:

Հակառակ տեսակետին է հարում Հ. Բարսեղյանը, որն անդրադառնալով լեզվաշինարարության նորմավորմանը՝ ընդգծում է, որ լեզվական բոլոր նորարարությունները հասարակության կողմից պնդվում են ընդունվելով, ինչն հեռանկար ունեցող իրողություններ, այլապես լեզվահամակարգին խորթ բոլոր նորարարական փորձերը, որպես նրա զարգացման գործընթացի արհեստական եւ կամայական միջամտություններ, դատապարտված են մերժման [1, էջ 6]:

Նորմավորումն, ինչ խոսք, անհրաժեշտաբար պետք է բխի լեզվի համընդհանուր, քննականական օրինաչափություններից, ինչը հատկապես կարևորվում է տերմինակերտման երկար ու աշխատատար գործընթացում, ուր կամայական, գիտակցանությունից զուրկ տերմիններն անընդունելի են: Մինչդեռ, անվստելի վիստ է, որ տեղեկատվական տերմինաբանության մեջ խառնակազմ միավորների ներթափանցումն անխառնափելի է: Բանն այն է, որ տեղեկատվության առեղծի հոսքն ու լեզվտրոնային վիստով հաղորդակցվելու հաճախակիանությունն իրենց անմիջական ակցորությունն են ունենում հնարավորինս հակիրճ եւ հասկացության ողջ թվանդակությունն արտահայտող տերմինների ստեղծման հարցում: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է դառնում լեզվական միջոցները տնտեսել, բազմաբաղադրիչ տերմինները կրճատել ու խտացնել: Հապճեպ հաղորդակցումներն իրականացվում են հիմնականում բանավոր խոսքում՝ ծագած տարատեսակ խառնիխտոն տարրերով, որոնք ի տարբերություն պրավոր խոսքի բաղադրիչների՝ հեռու են նորմավորված համարվելուց: Այս ամենի արդյունքում ստեղծվում են զեղչված անդամներով տերմիններ՝ հիմնականում միավորների ամբողջական հատվածների երկատման, բաղադրիչների կրճատման ու միաձուլման ճանապարհով:

Մասնագիտական գրականությունում ձուլույթներ (telescoping, անվանում այն միավորները, որոնք առաջացել են մեկ կառույցում երկու բաղադրիչների համակցումից, կամ նույն հարադրույթային դասին պատկանող միավորների խաչավորումից [9, էջ 47]):

Տեղեկատվական տերմինաբանության մեջ բաղադրությունները հիմնականում արմատական ձևայինների հատման միջոցով կազմված ձուլույթներ են, որոնք մենք կանվանենք տերմին-ձուլույթներ:

խառնակազմ տերմիններում հիմնականում բաղադրիչների հետ մեկտեղ առկա է նաև վերջածանցը, որը հետադարձաբար տարանջատվում է ածանցված տերմին-ձուլույթից: Այդ առումով բաղադրությունն էականորեն տարբերվում է ածանցումից. եթե վերջինս դեպքում տեղի է ունենում բառերի ձևայինների մասնակի համընկնում, ապա բաղադրության միջոցով նոր միավորների ստեղծման արդյունքում լեզվական միավորների խաչավորումը տեղի է ունենում ինչպես մասնակի, այնպես էլ ամբողջական համընկմամբ, բայց այս դեպքում գործածվում են բառերի սկզբնական կամ վերջնական արմատական ձևայիններ: Օրինակ՝

ինչ վերաբերում է բաղադրվալին կազմություններում վերջածանցի գործածությանը, այն բացի բառակազմականից՝ ունի նաև ձևական եւ իմաստատանական նշանակությունը: Նպատակում է միավորների համահունչությանն ու ընդգծում դրանց արտահայտչականությունը:

(Իրենակ՝ տերմին-ծառայող)՝ Երկրորդ միավորի վերջածանցը ծուլվելով տանջել, հանգիստ չտալ քային՝ վերաձվում է գոյականի և ընդգծում տվյալ ծրագրային փաթեթի էությունը:

Ոճակա՛ն Երանգա՛վորմա՛ն աչստո՛նառվ է՛լ հաճախ մթազնվում են քաղաքկային սիավորներին շեղոր նշանավորթյունները, տերմինները ստանալում են Երգիծակա՛ն նրքերա՛նգ, ինչի հալսոնալլես չի խրախոսվում տեղսինակերտմա՛ն գործընթացում:

Բառակազմական այլ միջոցներին շարքում բացարկության լեզվաբանական կարգավիճակը սահմանելու համար փորձել ենք անդրադառնալ նրա բառակազմական մեխանիզմին, իմաստառճական բնույթագրին ու գործառությանը:

Դիտարկված կախապարեններից ազնիւայտ Լ., որ այս տիպերից յուրարանյուրի կառուցվագրում որպէս բաղադրիչներ ընդգրկվում են տարբեր հոսքի մասերին պատկանող

Օրնակներից պարզ է, դառնում նաև, որ բազմաթիվության միջոցով ձևավորված միավորները պարզապես բառաբարդման արդյունք չեն, նրա յուրաքանչյուր բաղադրյալ ընկալվում է որպես առանձին, ինքնուրույն միավոր: Այս դեպքում բաղադրյալին միավորը կապվում է համաձայն կառուցվածքային և իմաստաբանական հարաբերությունների: Այդ հարաբերություններում, ինչպես նշվեց հոդվածի սկզբում, մեծ դեր է խաղում նաև համաբառությունը: Այսպես, +++++ բաղադրիչներից բաղկացած ++++ տերմին-ծուլույթի +++++ միավորը համադրոճաճական բառաբաղադրում մատուցանում է, հեքիաթային հարասյունությունների ներքին: Համաշխարհային ցանցում ամրա գոյացողների առատությունն ընդգծելու նպատակով արտաքին համաբառությունային հիման վրա կերտվել է վերոհիշյալ տերմին-ծուլույթ, որում արտահայտված է նշանակալակական կոնոտատիվ ասպարազակ: Արքանն տերմին-ծուլույթների չեզոք և ռեակտիվ նշանակություններն ախպես են շերտավորվում, որ դժվար է դաճեում տարանջատել դրանցից առաջաշարին: Իմաստային նման գաղաղացումներն ու միավորների խաչավորումը իմացվեցում են կրկնաէի պատճառաբանականությանը:

Տեղեկատվական տնրմիսաբանության կերտման հարցում խնդրահարյույց է +-մասնիկի
հարցը։ Հրամանայի տերմինաբանական կոմիտեի որոշ լեզվաբաններ այդ մասնիկը դառում են
նախադասացների շարքով¹, մինչդեռ, այն ոչ թե ածանցգրած է, այլ կազմում է +++ միավորի
կազմակերպի մասնիկը, որը տարբեր ամբողջական հիմքերի միանալով² կազմում է հաւանյա
գործածվող այլ շարք տերմին-ծուռություններ, ինչպէս³ ++ + + + + + + + + + : Եւրեք :

բաղադրություն լիովին կարող է դիտվել որպես լեզվի տնտեսման արդյունավետ միջոց: Իսկ բաղադրության արդյունքում կերտված տերմին-ծուլությունները կարող են նաև ձևակերպվել որպես ձևահնչյունաբանական կաղապարների ստեղծման միջոց, քանզի միավորների հատույթավորումը տեղի է ունենում նյաթածնաբանական մակարդակում, և բաղադրված միավորների միավորման հարցում ուշադրություն է դարձվում նաև հնչյունային համահնչյունյալնը:

Օրինակ՝ ++++ ծուլություն կարևորվում է, ոչ միայն ձևությանների, այլև հնչյունների համակցումը, ընդհանուր միավորի բարենհչությունը: Ընդերք բնագրային օրինակ՝ Եվրոտ 4-ը որպես բազմալեզու ընկալման միջոց Ժան-Պիեռ Ալամ Տեղեկատվության ծավալն ու դանդաղ հոսքը կարող են խոչընդոտել այնպիսի բազմալեզու մեթոդի ընկալմանը, ինչպիսին Ավրոտն է: +++:

Փաստորեն, բաղադրությունները բառակազմական այլ միջոցների շարքում իրականացնում են իրենց յուրօրինակ «առաքելությունը»՝ ներկու փողկապակցված գործառույթները՝ բառակազմական և իմաստառական:

Դիտարկված օրինակները ակնհայտ է, որ բառակազմական բաղադրության հիմնական, շարժիչ գործառույթ է, որը թույլ է տալիս բառատեղծման համակարգում այն դիտել որպես առանձին բառակազմական միջոցով:

Չնայած հաղորդակցման մեջ իմաստառական գործառույթի մեծ դերին ու նշանակությանը այն տերմինակերտման գործընթացում չի խրախուսվում: Եթե բառակազմական գործառույթը նպաստում է նոր միավորների ստեղծմանը և լեզվի բառային կազմի թարմացմանն ու համալրմանը, ապա իմաստառականը նախադրում է նաև անհատական ռեակցիաների անգամալորում:

Գրականություն

1. Հ.Խ. Բարսեղյան, Տերմինաբանական ուղեցույց, Տերմինաբանական կոմիտեի որոշումներ, Երևան, «Լույս», 1964, 136 էջ
2. Ա.Հ. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, «Ապոլոն» հրատարակչություն, Երևան, 1983, 656 էջ
3. Հ.Զ. Պետրոսյան, Հայերենահայտական բառարան, «Հայաստան»
a. հրատարակչություն, Երևան, 1987, 685 էջ
4. Հ.Զ. Պետրոսյան, Ա.Ա. Գալստյան, Թ.Ա. Ղազարյան և ուրիշների, Լեզվաբանական բառարան, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 316 էջ
5. Аманова О.С., Словарь лингвистических терминов, Москва, 1966, 607 стр.
6. Никович В.А., Языковая норма, Издательство Просвещение, Москва, 1968, 94 стр.
7. Пауль Г., Принципы истории языка, Издательство иностранной литературы, Москва, 1960, 500 стр.
8. Иешковский А.М., Избранные труды, Москва, 1959, Учпедгиз, 252 стр.
9. DUBOIS J., GIACOMO M. GUESPIN L., MARCELLES C., MARCELLES J., Baptiste, M., Dictionnaire de linguistique et des sciences du langage. 17, Rue du Montparnasse 75298 Paris, 1994, Larousse, 514 p.
10. GUIRAUD, P. L'ARGOT, PUF, Paris 1969, 128 p.
11. <http://www.delf.culture.gouv.fr/> Journal officiel du 22 juillet 2005 NOR : CTNX0508543X, Recommandation sur les équivalents français du préfixe e-
12. <http://www.film.org/fle/ra/12-multi.php> MULTIMEDIA. RESEAUX ET FORMATION
13. Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան, Ա.Ալլախայան, Ա.Աբեղյան, Թիֆլիս, 1919
14. Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Հ. Հովհաննիսյան, Թ. Ավդալբեկյան, Ա. Տոնոյան, Հայաստան, 1924
15. Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Վ. Փոբեյան, Երևան, 1972
16. Արդի ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Լ. Պետրոսյան, Գ. Սիմոնյան, Մկրտչյան, Երևան, 1998
17. Французско-русский юридический словарь, Г. И. Мачковский, Москва, 2002.

Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան